

Կ Ա Ր Ծ Ի Ք

ՍԱՐԳԻՍ ԲԱԼՂԱՐՅԱՆԻ « ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՆՆԱՐԿՆԵՐԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ» ԹԵԿՆԱԾՈՒՄԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Սարգիս Բալղարյանի ատենախոսությունը նվիրված է Հայկական վաճառականական ձեռնարկները Նոր Ջուղայի առևտրական ցանցում, որի ստեղծման և զարգացման գործում նշանակալի ավանդ է ունեցել, սակայն հաճախ ստվերում մնացել Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցի առևտրական դասընթացը վարող Կոստանդ Ջուղայեցին: Հենց նրա մատենագրական ժառանգության վերհանման միջոցով կարելի է պատկերացում կազմել հայկական վաճառականական ձեռնարկների՝ որպես հայ գաղթօջախներից՝ Նոր Ջուղայի համաշխարհային առևտրական ցանցի հաջողությունը պայմանավորող գործոնների մասին: Շատերն են իրենց հետազոտություններում օգտագործել, անդրադարձել որոշ հատվածների, սակայն համապարփակ աշխատանք այդպես էլ չի իրականացվել, ուստի Բալղարյանի այս նախաձեռնությունը, որքան կարելի է համարել համարձակ, նույնքան էլ գնահատելի:

Հիրավի, 17-րդ դարի երկրորդ կեսի առևտրական գործիչ Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկ-դասագրքերը հայկական վաճառականական գրականության կարևոր նմուշներ են և թույլ են տալիս վերականգնելու հայկական առևտրային պատմությունը: Նոր Ջուղայի հայկական առևտրական համայնքը շաղկապված է եղել, իսկ որոշ դեպքերում հենց նրա շուրջ է ձևավորվել միջազգային առևտուրը: Ըստ այդմ, Ս. Բալղարյանի ատենախոսությունը համահունչ է արդի պատմագիտության միտումներին:

Ատենախոսության մեջ պարզաբանված է 17-18-րդ դդ. հայկական վաճառականական գրականության վրա Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկների ազդեցության հարցը, որը նաև ցույց է տալիս ժամանակագրական սահմանները: Դա մի ժամանակաշրջան էր, երբ հայկական որոշ գաղթօջախներում ծաղկում էր ապրում առևտուրը:

Ատենախոսությունում գլխաբաժանումները կատարված են տրամաբանական և ճիշտ եղանակով: Նա անդրադառնում է «Աշխարհաժողով»-ի ձեռագրերին եւ ընդօրինակություններին, դրանց տեղայնացմանն ու կիրառությանը, տարբեր ժամանակներում եւ տարբեր անձանց կողմից ձեռագրերում լրացված հիշատակարաններին: Հետաքրքիր անդրադարձներ եւ համեմատություններ են արված Կոստանդի հիշյալ ձեռնարկի ու դրանից առաջ ու հետո գրված նույնանման աշխատությունների բովանդակությանը: Հեղինակն անդրադառնում է նախ Կոստանդ Ջուղայեցու վաճառականական գործունեությանը, որը թերեւս շատ քիչ է ուսումնասիրված եւ ապա միայն Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքին կից նրա դպրոցի եւ վաճառականական եւ դրան հարակից դասագրքերի ստեղծման պատմությանը: Նրա դպրոցը դիտարկված է Նոր Ջուղայում գործող օտար միսիոներական դպրոցների հետ համեմատական դաշտում: Անդրադարձ է արված նրա աշակերտների թվին (250-300), որոնք իրենց հետագա գործունեության ընթացքում մշտապես օգտվել են «Աշխարհաժողով»-ի ընձեռած գործնական եւ միջազգային կարգի վաճառականին հարիր բարոյա-խրատական նկատառումներից:

Մանրակրկիտ ուսումնասիրության է ենթարկված «Աշխարհաժողով»-ի և Ղուկաս Վանանդեցու կողմից Ամստերդամում հրատարակված «Գանձ չափոյ, կշռոյ, թւոյ եւ դրամից բոլոր

աշխարհի» (1699 թ.) աշխատությունների միջև կապը՝ ապացուցելով, որ վերջինս «ընտրողաբար օգտվելով Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողովի նյութերից՝ այն հարստացրել է իր գիտելիքների ու փորձի շնորհիվ:

Առանձնապես հետաքրքիր է ստենախոսի հանգամանալից դիտարկումը վաճառականական տեղեկատվության, ինչպես նաև կապիտալի շրջանառության մասին, որտեղ հայկական նյութը հաջողությամբ համեմատվում է եւրոպական, այդ թվում նորագույն համանման ուսումնասիրությունների հետ:

Հանգամանալից ուսումնասիրության է ենթարկված առետրի համաշխարհային կենտրոնների արտացոլումը «Աշխարհաժողով»-ում, դրանց բնութագրումները համեմատելով հայկական այլ աղբյուրների հետ (Հովհ. Տեր-Դավթեան, Գր. Դարանաղցի, Եղ. Կարնեցի, Մինաս Մինասյան եւ այլն): Ի դեպ, Հովհ. Թութունջու Եթովպիայի հետ Կոստանդի «Աշխարհաժողով»-ի համապատասխան մասի համեմատությունը ուսումնասիրության կարոտ է եւ մեր կարծիքով այնքան էլ համոզիչ չէ:

Ատենախոսության *առաջին գլուխը* նվիրված է Կոստանդ Ջուղայեցուն ու հայկական վաճառականական ձեռնարկների քննությանը: Ատենախոսն անդրադարձել է Կոստանդ Ջուղայեցուն՝ հայերեն ձեռագրերի հիշատակարաններում (էջ 11) և առևտրական փաստաթղթերում (էջ 14): Փաստերով ապացուցված է, որ Կոստանդ Ջուղայեցու երկու վաճառականական ձեռնարկ-դասագրքերը՝ «Աշխարհաժողով» ու «Դոներն ռադամին» վերնագրերով, շարադրվել են ոչ թե 1685 թ., այլ՝ 1687 թվականին (էջ 27):

Այս գլխի առավելություններից է նաև Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողով»-ի և Ղուկաս Վանանդեցու «Գանձ չափոյ» երկերի որոշ հատվածների համեմատական ներկայացումը այունակով (էջ 48):

Ատենախոսության *երկրորդ գլուխը* նվիրված է հայկական վաճառականական ձեռնարկներում առևտրական տեղեկատվությանը՝ ուշ միջնադարից մինչև վաղ արդի դարաշրջան: Թերևս այս գլխի կարևոր եզրակացություն է՝ ուշմիջնադարյան վաճառականները, դեմ առ դեմ՝ խոսակցություններից բացի, ունեին առևտրական տվյալներ ստանալու 2 տարբերակ՝ նամակագրություն ու համառոտ տեղեկատուներ, որոնց զարգացումը ընթացավ ձեռնարկ-դասագրքերի վերածվելու ճանապարհով (էջ 57):

Քննարկելով առևտրական նորամուծությունների մասին՝ որպես այդպիսիք առանձնացնում է տնտեսական թերթերի ու առևտրական դասագրքերի տարածումը, որոնք ծառայել են որպես կարևոր տեղեկատվություն: Սակայն ստենախոսը նկատում է, որ նամակագրությունն, այսպիսով, ամենևին էլ ետին պլան չմղվեց տեղեկատվության հանրային տարածման եղանակների առաջացման պայմաններում (էջ 59): Ըստ «Աշխարհաժողով» ձեռնարկի՝ հանգամանորեն ներկայացված է վաճառականական էթիկան ու խորհուրդները: Ատենախոսը ընդգծում է, որ վաճառականի ապրելակերպին ու գործունեության նրբերանգներին ծանոթությունը պայմանավորված էր առևտրական փորձառությամբ, որը Կոստանդ Ջուղայեցին կուտակել էր առնվազն 1660-1670-ական թթ.՝ իր ձեռնարկը շարադրելուց երկու տասնամյակ առաջ (էջ 73): Իսկ Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողով»-ի՝ մատնանշած 72 բնակավայրերը արտացոլում են այն 4 ուղղությունները, որոնցով ծավալվել էր Նոր Ջուղայի հայ վաճառականությունը՝ Հնդկական օվկիանոսի ավազան, միջերկրածովյան նավահանգիստներ, Հյուսիսարևմտյան Եվրոպա ու Ռուսական կայսրություն: Ատենախոսը նկատում է, որ Ջուղայեցի հեղինակի ներկայացրած ցուցակի ամենաարևելյան կետը Մանիլա քաղաքն է, որը 1571 թվականից անցել էր Իսպանիայի վերահսկողության տակ և դարձել

իսպանական արևելահնդկական գաղութների կենտրոնը: Մանիլայի հետ հայ վաճառականների առևտրական կապերը սկիզբ էին առել առնվազն 1660-ական թթ. (էջ 76):

Ատենախոսության մեջ հանգամանորեն ներկայացված են որոշ երկրների չափի, կշռի ու դրամի միավորների, ինչպես նաև մաքսատուրքերի մասին տեղեկությունները:

Ատենախոսը կատարել է որոշ կարևոր քննական համեմատություններ և ըստ այդմ եզրակացություններ, այն է՝ Հովհաննես Թութունջիի ուղեգրության հետ «Աշխարհաժողով»-ի բնագրային համեմատությունը կասկածի տեղիք չի թողնում, որ ջուղայեցի հեղինակը որևէ տարբերակով օգտվել է նշված ուղեգրությունից՝ որպես Եթովպիայի մասին առատ տեղեկությունների աղբյուր: (Երկերի որոշ հատվածների համեմատական ներկայացումը սյունակով էջ՝ 87):

Ատենախոսության *երրորդ գլուխը* ամբողջովին նվիրված է Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկների գործածությունը Նոր Ջուղայի առևտրական ցանցում: Այդ համատեքստում նշվում է Համաշխարհային առևտրի շուկաների բնագավառում ջուղայեցի վաճառականներին հարուստ գիտելիքներով զինող կրթության համակարգը, որը տասնամյակներ շարունակ հաջողությամբ գործում էր Նոր Ջուղայում, կենտրոնական տեղ էր զբաղեցնում Ս. Ամենափրկիչ վանքում գործող դպրոցը (էջ 95):

Հանգամանորեն ներկայացված է այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ վաճառականները և Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկների ձեռագրերը, այդ ձեռնարկների ազդեցությունը հայկական վաճառականական գրականության վրա (էջ 107 և 110)

Այսպիսով՝ ատենախոսն իրականացրել է թեմայի վերաբերյալ պատմական նյութի հավաքում, համակարգում և նյութի ներկայացում, ինչի ժամանակ նրա կողմից դրսևորվել է օտարալեզու գրականության հետ աշխատելու հմտություն: Ատենախոսությունը շարադրելիս հեղինակը օգտագործել և շրջանառության մեջ է դրել Օքսֆորդի Բողլեյան գրադարանի, Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի, Երևանի Մաշտոցի և Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանների ձեռագրերը: Ս. Բալդարյանի աշխատությունը վերջին շրջանում ձեռագրական հարուստ հիմքի վրա հիմնված ուսումնասիրություն է, որը նոր լույս է սփռում ուշ միջնադարի հայ առևտրի պատմության վերաբերյալ:

Հրապարակային պաշտպանության ներկայացված թեկնածուական ատենախոսությունում, սակայն, կան նաև որոշ թերություններ ու բացթողումներ, որոնց վրա հրավիրում ենք ատենախոսի ուշադրությունը.

- Քանի որ նյութը վերաբերում է Կոստանդ Ջուղայեցուն, ապա ճիշտ կլինի աշխատության վերնագրում (գոնե փակագծերում) նշվեր նրա անունը: Ինչպես, օրինակ, «Կոստանդ ջուղայեցին եվ հայկական վաճառականական ձեռնարկները Նոր Ջուղայի առևտրական ցանցում»:
- Տեղեկությունը, որ Ս. Ամենափրկիչ վանքի տպարանը, հիմնված 1636-ին, մերձավորարևելյան առաջին տպարանն էր (էջ 28), վիճարկվում է (տես “The Arabic-Persian printing press was founded by the Carmelite missionaries in 1629”, W. M. Floor, The First Printing-Press in Iran Zeitschrift der Deutschen Morgenl’ndischen Gesellschaft, Vol. 130, No. 2 (1980), p. 369), “The first printing house in the Middle East has been introduced 1610 at the Monastery of Qozhaya in the Valley of Qadisha” [in Lebanon], Gabriel Quicke, A Spiritual Discovery of the Christians in the Middle East, Gompel&Svacina, 2020, p. 96).
- Խոսելով այն մասին, որ «նավահանգստային հայերը» նյութական միջոցներ էին ներդնում հայկական տպարանների հիմնադրման գործում և հովանավորում հայերեն

գրքերի հրատարակության աշխատանքները (էջ 40), կարելի էր ընդգծել նրանց և Նոր Ջուղայի հայության ընդհանուր կապերի մասին:


- Ատենախոսության մեջ անհրաժեշտ էր անդրադառնալ Վ. Բայբուրդյանի «Նոր Ջուղա» մենագրությանը, ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 2007, 152 էջ:
- Ցանկալի կլինեք ատենախոսությունում տրվել մի շարք օտար բառերի բացատրությունները (դոմզ, մառչիլ, ֆսկին, օրդնրի և այլն):

Անշուշտ, նշված դիտողությունները մասնակի են և չունեն սկզբունքային նշանակություն և բնավ ստվեր չեն ձգում աշխատության վրա: Ընդհանուր առմամբ կատարված է հսկայական աշխատանք՝ նյութերը հայտնաբերելու, մեկտեղելու և վերլուծելու առումով: Ուսումնասիրված է թեմայի վերաբերյալ տարատեսակ և բազմալեզու (իտալերեն, ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն և այլն) գրականություն, օգտագործված է ձեռագիր և տպագիր բազմալեզու մատենագրություն: Հեղինակի հրատարակած հոդվածներն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները:

ՈՐՈՇԵՑԻՆ - ՍԱՐԳԻՍ ԲԱԼԴԱՐՅԱՆԻ «Հայկական վաճառականական ձեռնարկները Նոր Ջուղայի առևտրական ցանցում» Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը լիովին համապատասխանում է թվանիշին, մասնագիտությանը և ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսությունների ներկայացվող պահանջներին: Ուստի հեղինակը արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Եզրակացությունը հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայ գաղթօջախների և Սփյուռքի պատմության» բաժնի 2020 թ. հուլիսի 10-ի նիստում (թիվ 6 արձանագրություն):

ՀՀ ԳԱԱ ՊԻ «Հայ գաղթօջախների և բաժնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր



Սփյուռքի պատմության»
Գ. Ս. Ստեփանյան

«Հայ գաղթօջախների և Սփյուռքի պատմության»

բաժնի վարիչ, պ.գ.դ., Գ. Ս. Ստեփանյանի

ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ ՊԻ գիտքարտուղար, պ.գ.թ., դոցենտ

Հ. Ղ. Մուրադյան